

Հայաստանի Հանրապետության նախագահ

Մերժ Սարգսյանին

Մեծարգո պարոն Նախագահ,

Ստիպված եմ դիմել Ձեզ, քանզի մեր երկրում պատմականորեն այնպես է ձևավորվել, որ միայն նախագահական ինստիտուտն է որոշումներ կայացնում, իսկ կառավարման պետական համակարգի մյուս ինստիտուտները, իրենց բարձրագույն օղակների ղեկավարների ճնշող մեծամասնության պրոֆեսիոնալ անիրազեկության, գավառականության և պետական մտածելակերպի ցածր մակարդակի պատճառով գործունակ չեն:

Միայն դրանով կարելի է բացատրել այն իրողությունը, որ երկրի կառավարման պետական համակարգն իր կառուցվածքում ունենալով՝ մի կողմից երկրի ֆինանսատնտեսական կառավարման տարբեր ձևաչափերի ինստիտուցիոնալ կազմավորումներ (ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով, Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարություններ, Կենտրոնական բանկ՝ բանկային համակարգով, Գանձապետարան, զանազան վերահսկիչ ֆինանսատնտեսական, ինչպես նաև հակամենաշնորհային կազմավորումներ), իսկ մյուս կողմից՝ միջազգային մակարդակի տարբեր խորհրդատուներ՝ Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային բանկի կառուցվածքային ստորաբաժանումներ և տնտեսական առաքելությամբ Հայաստանում հավատարմագրված ոչ պակաս կարևոր այլ արտասահմանյան կառույցներ, չկարողացավ երկրի բնակչության ճնշող մեծամասնությանը զերծ պահել հետևյալ երկրնորանքից՝ «Հնարավոր է արդյոք հետագա գոյատևումը հայրենի երկրում, թե՞ ոչ»:

Համաձայնեք, որ բացարձակապես անհամոզիչ, ոչ պրոֆեսիոնալ և անիրազեկ հնչեցին տարբեր մակարդակի ղեկավարների անորոշ և անտրամաբանական բացատրությունները, թե երկրի արժույթային շուկայում ստեղծված իրավիճակը հետևանք է՝

- համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի,
- բնակչության կողմից ապրանքների և մթերքների հանդեպ նախաամանորյան պահանջարկի չափազանց մեծ աճի,
- ՌԴ-ում ազգային արժույթի ճգնաժամային իրավիճակի,
- այսրոպետական օգուտ ստանալու ձգտումով սպեկուլյանտների խարդախությունների,

- բնակչություն շրջանում անհիմն խուճապի և այլ հիմնավորումների:

Վերոնշյալ պատճառներն ածանցյալ են հետևյալ հիմնախնդիրներից.

- Երկրում չի կայացել տնտեսության իրական հատվածը՝ արդյունաբերությունը.
- Ծաղկում են ծառայությունների և մեծածախ առևտրի մենաշնորհված ոլորտները.
- Բացակայում է գրագետ ֆինանսատնտեսական կառավարումը:

Ոչ ոք իր վրա պատասխանատվություն չվերցրեց՝ ասելով, որ ֆինանսատնտեսական հատվածում տիրող այս իրավիճակին մենք համառոտ են գնացել ենք առնվազն վեց տարի:

Մենք հույսեր էինք փայփայում, որ օտարերկրյա մասնավոր ներդրումների տարեցտարի աճող ծավալը հնարավորություն կտա խթանելու մանրածախ առևտուրը և ծառայությունների ոլորտը՝ հիմք հանդիսանալով կայուն տնտեսության համար: Կայուն տնտեսության կառուցման նման մոտեցումը հնարավոր է միայն տարանցիկ երկրներում, ինչպիսիք են՝ Մոնակոն կամ Բենիլյուքսի երկրները, սակայն՝ ոչ կիսաշրջափակման մեջ գտնվող Հայաստանը:

Մրա հետ մեկտեղ պետք է նշել, որ տնտեսական հատվածի բարձրագույն օղակների ղեկավարները կոչեր էին հնչեցնում փոքր և միջին բիզնեսի զարգացման համար:

Եթե փոքր բիզնեսի հետ կապված որոշակիություն կա, թեկուզև հարկային բեռը հանելու ոլորտում (որը խիստ անհրաժեշտ է, բայց ոչ բավարար, սակայն չկա փոքր բիզնեսի ոչ մի ենթահամակարգ, չեն վերացվել տեղական շորթումները չինովնիկական շերտերի կողմից, չի արմատավորվում բնակչության լայն խավերի համար հասանելի փոքր բիզնեսի աջակցման մեթոդական օգնության տարածքային ճյուղավորված համակարգը, իսկ բանկային համակարգը գործնականում իր տոկոսադրույքներով «արմատախիլ» է անում փոքր բիզնեսը), ապա միջին բիզնեսի զարգացման հարցում, ընդհանրապես, խառնաշփոթ է:

Սովորաբար միջին բիզնեսի տակ հասկանում ենք այն տնտեսվարող սուբյեկտներին, որոնք իրենց տնտեսական ցուցանիշներով համապատասխանում են որոշակի նորմատիվների: Համաշխարհային տնտեսական պրակտիկայում միջին բիզնեսը հաջողությամբ զարգանում է այն երկրներում, որտեղ զարգացած է խոշոր բիզնեսը (ԱՄՆ, Գերմանիա, Ճապոնիա, Հարավային Կորեա, Շվեդիա և այլն): Այնտեղ, որտեղ գործում են խոշոր ձեռնարկություններ և արտադրական կոնգլոմերատներ, տեխնոլոգիական գործընթացների մի մասը նրանք պատրաստ են դնել միջին բիզնեսի «ուսերին», դրանով իսկ թեթևացնելով իրենց կողմից հիմնական խնդիրների իրականացումը: Այնտեղ, որտեղ ձևավորվում է միջին բիզնես, այնտեղ ձևավորվում է հասարակության միջին խավը, որը պետականության հիմնական բաղադրիչն է:

Հայաստանում չկա զարգացած արդյունաբերական ոլորտ (չհաշված սննդի արդյունաբերության մի քանի օբյեկտները), ուստի տնտեսության մեջ չի լինի միջին բիզնեսի ճյուղավորված հատված: Դրա փոխարեն կզարգանան ծառայությունների ոլորտն

ու մենաշնորհային մանրածախ առևտուրը, որոնց, ըստ նորմատիվային պահանջների, անհրաժեշտության դեպքում կարելի է դասել միջին բիզնեսի շարքը:

Ավելին, վերլուծելով միջին վիճակագրական փոքր բիզնեսի «կյանքի տևողությունը», կարելի է պնդել, որ տնտեսության այս հատվածն այնքան էլ մրցունակ չէ մենաշնորհված մեծածախ-մանրածախ առևտրի պայմաններում:

Տնտեսության զարգացման մեջ առանձնահատուկ դեր է խաղում բանկային համակարգը, որը երկրի գործարար ակտիվության լոկոմոտիվ է, սակայն ոչ մեզ մոտ: Մեր բանկային համակարգը՝ Կենտրոնական բանկի գլխավորությամբ, հիմնականում վաշխառուի դեր է խաղում է և ոչ ավելին: Բացի բարձր տոկոսադրույքներով վարկեր տրամադրելուց՝ պլանային «չվերադարձվածներին» դեպքում առաջացող կորուստները ծածկելու նպատակով, հայրենական բանկային համակարգը գրեթե ոչինչ չի անում երկրի տնտեսության նպատակաուղղված ամրապնդման համար:

Զարգացած երկրներում բանկային համակարգը մասնակցում է տնտեսության հեռանկարային ճյուղերի զարգացմանը և տնտեսության երկարաժամկետ զարգացման անմիջական ֆինանսավորողն է: Այն իր տարաբնույթ գործիքների հավաքածուով կարգավորում է երկրի ֆինանսատնտեսական կայունությունը: Բանկային համակարգի շնորհիվ վերածնվել են Ճապոնիայի, Հարավային Կորեայի, Գերմանիայի, Չինաստանի և Արևմտյան Եվրոպայի ու Ասիայի շատ այլ երկրների տնտեսությունները, որոնք քայքայվել էին Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ:

Իսկ մեզ մոտ բանկային համակարգը, կարծես թե, հանդես է գալիս «կողքից դիտողի» դերում, այլ ոչ թե կարգավորողի:

Հաշվի առնելով վերոնշյալը, նպատակահարմար կլիներ երկրի կառավարման ամենաբարձր մակարդակում ստեղծել անկախ փորձագիտական հանձնաժողով՝ ուսումնասիրելու համար երկրի տնտեսական կառավարման այն բացասական փորձը, որի հետևանքով մեր երկիրը հայտնվել է նման ողբերգական իրավիճակում, և ուղիներ որոնել երկրի տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու ու զարգացնելու համար:

Հարգանքով՝

Լևոն Ներսիսյան

Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի տնօրեն